ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/272

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ «Անգել» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Վ.Պապյանի (լիազորագիր տրված՝ 15.01.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.12.2020թ. թիվ 26/26-1/19653-2020 գրությամբ «Անգել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 23.12.2020թ. թիվ Ե/40/2510-20 գրության հիման վրա 28.12.2020թ. թիվ 26/26-1/19653-2020 գրությամբ նախաձեռնել է «Անգել» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Անգել» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Անգել» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/272 ընթացակարգի շրջանակներում 15.01.2021թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հետաձգել նիստը՝ տրամադրելով Ընկերությանը երկու աշխատանքային օր՝ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում ներկայացնելու համար:

«Անգել» ՍՊԸ-ն 19.01.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով թիվ ՍՑ-ՆԳ-2020/272 ընթացակարգի նախաձեռնման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը, գտնում ենք, որ նախաձեռնումը հիմնազուրկ է, իսկ նախաձեռնված ընթացակարգը՝ ենթակա մերժման հետևյալ պատճառներով՝

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմնին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

«Անգել» ՍՊԸ-ին գնուների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու նպատակով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի ժ/պ-ն ՀՀ Ֆինանսների նախարարի տեղակալին ուղարկած գրությունով հայտնել է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Անգել» ՍՊԸ-ի միջև 09.06.2020թ. կնքված N 01/145 պայմանագիրը 14-րդ և 34-րդ չափաբաժինների մասով միակողմանի լուծվել է, որի մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվել է 17.12.2020թ.: Նշված գրությունը չունի ոչ ամսաթիվ, ոչ ելքի համար, հետևապես այն պետք է դիտել առոչինչ փաստաթուղթ, քանի որ անհնարին է պարզել, թէ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի տնօրինությունը գործել է կարգի 45-րդ կետով նախատեսված 5-օրյա ժամկետի պահպանմամբ, թէ՝ ոչ:

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է Գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ «պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցվում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ձեռնարկատիրական գործունեություն իրականացրելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն տվյալ պայմաններում արտակարգ և անկանխատեսելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով»:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Անգել» ՍՊԸ-ի միջև 09.06.2020թ. կնքված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով N 01/145 պայմանագրի համաձայն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Անգել» ՍՊԸ-ի միջև 09.06 .2020թ. կնքված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով N 01/145 պայմանագրի համաձայն «Անգել» ՍՊԸ-ն պարտավորվել է արտադրելու և պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին մատակարարելու 80 լրակազմ «Կոստյում ձմեռային», 45 հատ «Խալաթ», 100 լրակազմ «Ամենօյա համազգեստ», 90 զույգ «Ուսադիրներ ամենօրյա» և 30 լրակազմ «Կոստյում» ապրանքատեսակներ:

23.09.2020թ. համապատասխան հաշիվ-ապրանքագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին է մատակարարվել պայմանագրով նախատեսված 100 լրակազմ «Ամենօյա համազգեստ», 45 հատ «Խալաթ» և 90 զույգ «Ուսադիրներ ամենօրյա» ապրանքատեսակները, որոնք «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ընդունվել են և թեկուզ ուշացումներով, վճարումները կատարվել են, իսկ 45 հատ «Խալաթ» ապրանքատեսակը վերադարձվել է «Անգե» ՍՊԸ-ին՝ որոշ տեխնիկական ձևափոխումներ կատարելու համար: Տեխնիկական ձևափոխումները կատարելուց հետո 21.10.2020թ. համապատասխան հաշիվ-ապրանքագրով 45 հատ

խալաթները կրկին ուղարկվել են «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին: Այնուհետև 27.10.2020թ. ուղարկվել է նաև «Անգել» ՍՊԸ-ի հաշվին կատարված խալաթների գործվածքի բաղադրության վերաբերյալ նյութագիտական փորձաքննության եզրակացությունը, համաձայն որի գործվածքի բաղադրությունը համապատասխանում է պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին, չնայած այդ պահանջը չի եղել ոչ պայմանագրով, ոչ մրցույթը հրավերի տեխնիկական բնութագրով:

Փաստացի 45 խալաթները 2020թ. հոկտեմբերի 21-ից գտնվում են «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի տնօրինության տակ, սակայն մինչև օրս դրանց դիմաց վճարումներ չեն կատարվել, խախտելով պայմանագրով նախատեսված վճարման ժամանակացույցը:

Համաձայն կնքված վերոհիշյալ պայմանագրի 5.2 կետի Գնորդը (տվյալ դեպքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն) Վաճառողից (տվյալ դեպքում «Անգել» ՍՊԸ-ից) հանձման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

բ) պայմանագրի 5.4 կետով սահմանված է, որ եթե Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին՝ 7 աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը:

2020թ. ամբողջ ընթացքում, ընդհուպ մինչև օրս «Անգել» ՍՊԸ-ն գործել է ֆորս-մաժորային պայմաններում: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2020թ. մարտ ամսին հայտարարել է կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված համաճարակ: Դրա հետ կապված ՀՀ Կառավարության 16.03.2020թ. «ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ ՀՀ ամբողջ տարածքում 2020թ. մարտի 16-ից մինչև սեպտեմների 11-ը հայտարարվել է արտակարգ դրություն, իսկ ՀՀ Կառավարության 11.09.2020թ. N 1514-Ն որոշմամբ 2020թ. սեպտեմների 11-ից մինչև 2021թ. հունվարի 11-ը ՀՀ-ում սահմանվել է կարանտին:

Այս սահմանափակումների և «Անգել» ՍՊԸ-ի բազմաթիվ աշխատողների՝ կորոնավիրուսով վարակվելու պատճառով ամիսներ շարունակ ՍՊԸ-ն դադարեցրել է աշխատանքը, իսկ աշխատելու ընթացքում՝ գործել 20-25 % հզորությամբ, որի պատճառով խաթարվել է տասնյակ պայմանագրերով Ընկերության ստանձնած

պարտավորությունների կատարումը, ուստի առաջացել էր ֆինանսական միջոցների խիստ դեֆիցիտ:

45 հատ խալաթները «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին ուղարկելուց հետո բազմաթիվ անգամներ ՓԲԸ-ի ղեկավարությանը հեռախոսազանգերով ներկայացրել ենք իրավիճակը և խնդրել փոխանցելու 45 հատ խալաթների գումարները, քանի որ 80 լրակազմ «Կոստյում ձմեռային» և 30 լրակազմ «Կոստյում» ապրանքատեսակները գտնվում են արտադրման պրոցեսում, համարյա պատրաստի վիճակում, սակայն վերջնական ավարտի համար անհրաժեշտ աքսեսուարները ձեռք բերելու համար գումարներ չկան:

Մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 8-ը սպասելով և տեսնելով, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, անտեսելով հիշյալ պայմանագրով նախատեսված վճարման ժամկետները, չի փոխանցում 45 հատ խալաթների գումարը, 08.12.2020թ-ի գրությամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին հայտնել ենք, որ խալաթների գումարը չփոխանցելու պատճառով «Անգել» ՍՊԸ-ն միակողմանի լուծում է պայմանագիրը, հրաժարվում է համապատասխանաբար 80 և 30 լրակազմ «Կոստյում ձմեռային» և «Կոստյում» ապրանքատեսակների մատակարարումից և պահանջել մատակարարված 45 հատ խալաթները ետ վերադարձնել «Անգել» ՍՊԸ-ին: Տեսնելով, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն չի վերադարձնում 45 հատ խալաթները, 22.12.2020թ. N Ա-025 գրությամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին կրկին անգամ հայտնել ենք պայմանագիրը մեր կողմից միակողմանի լուծված լինելու մասին, հիմնավորել, որ պայմանագրի լուծման մեղավորը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն է: Հիմնավորումները չկրկնելու համար ուղարկում ենք հիշյալ գրության պատճենը: Նման պայմաններում, երբ դեռևս 08.12.2020թ. մեր կողմից պայմանգիրը միակողմանի լուծված է եղել, տարօրինակ է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից 17.12.2020թ. արդեն իսկ լուծված պայմանագիրը իրենց կողմից 14-րդ և 34-րդ չափաբաժինների մասով միակողմանի լուծելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը, կամ անպատշաճ կատարելը տեղի է ունեցել 2 կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորությամբ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ

իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալի հիման վրա, հաշվի առնելով «Անգել» ՍՊԸ-ի գործողություններում մեղքի բացակայությունը, խնդրում ենք «Անգել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված սույն ընթացակարգը մերժել»:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.12.2020թ. թիվ Ե/40/2510-20 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի «Անգել ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ 01/145 առ 09.06.2020թ. պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Հաշվի առնելով, որ Պայմանագրի թիվ 14-րդ չափաբաժնով նախատեսված 80 լրակազմ ձմեռային կոստյումները և թիվ 34-րդ չափաբաժնող սահմանված 30 լրակազմ կոստյումները «Անգել» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել՝ Պայմանագիրը վերոնշյալ չափաբաժիններով միակողմանի լուծվել է, որի մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվել է 17.12.2020թ»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության պահանջով՝ ներկայացնում է համապատասխան փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/272 ընթացակարգի շրջանակներում 15.01.2021թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/272 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/272 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Անգել» ՍՊԸ-ի միջև 09.06.2020թ. կնքվել է թիվ 01/145 ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հանդերձանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Անգել» ՍՊԸ-ն) պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված հանդերձանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից 50 օրացուցային օրը:

3. Պատվիրատուն «Անգել» ՍՊԸ-ին ուղղված 17.12.2020թ. թիվ Է/13/2444-20 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով ս.թ. ապրիլի 28-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 14, 26, 30, 32 և 34-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի «Անգել ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ 01/145 առ 09.06.2020թ. պայմանագիրը՝ 4 494 000 Հ դրամ ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 14-րդ չափաբաժնող սահմանված 80 լրակազմ ձմեռային կոստյումները և 34-րդ չափաբաժնող սահմանված 30 լրակազմ կոստյումները, որոնց ընդհանուր գինը կազմում է 2 616 000 ՀՀ դրամ՝ «Անգել» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի՝

2.4.1 կետի Վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 կետի Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.4 կետի Վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով»:

Թիվ 1 Հավելվածի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 50 օրացուցային օրում:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 կետը, այն է՝ գնորդը իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 50 օրացուցային օրից ավելի:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն միակողմանի լուծում է «Անգել» ՍՊԸ-ի հետ 2020թ. հունիսի 09-ին կնքված թիվ 01/145 պայմանագիրը 14-րդ և 34-րդ չափաբաժինների մասով»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 18.12.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.12.2020թ. թիվ 26/26-1/19653-2020 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 23.12.2020թ. թիվ Ε/40/2510-20 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Անգել» ՍՊԸ-ի միջև 09.06.2020թ. կնքվել է թիվ 01/145 ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հանդերձանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Անգել» ՍՊԸ-ն) պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված հանդերձանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից 50 օրացուցային օրը:

Ընկերությունը Պատվիրատուին ուղղված 08.12.2020թ. թիվ Ա-020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Անգել» ՍՊԸ-ի միջև 09.06.2020թ. կնքված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով N 01/145 պայմանագրի համաձայն «Անգել» ՍՊԸ-ն պարտավորվել է արտադրելու և պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն Ձեր կառույցին մատակարարելու 80 լրակազմ «Կոստյում ձմեռային», 45 հատ «Խալաթ», 100 լրակազմ «Ամենօյա համազգեստ», 90 զույգ «Ուսադիրներ ամենօրյա» և 30 լրակազմ «Կոստյում» ապրանքատեսակներ:

23.09.2020թ. համապատասխան հաշիվ-ապրանքագրով Ձեր կառույցին է մատակարարվել պայմանագրով նախատեսված 100 լրակազմ «Ամենօյա համազգեստ», 45 հատ «Խալաթ» և 90 զույգ «Ուսադիրներ ամենօրյա» ապրանքատեսակները: 100 լրակազմ «Ամենօյա համազգեստ» և 90 զույգ «Ուսադիրներ ամենօրյա» ապրանքատեսակները Ձեր կառույցի կողմից ընդունվել և վճարումները կատարվել են ուշացումներով, իսկ 45 հատ «Խալաթ» ապրանքատեսակը վերադարձվել է մեզ՝ որոշ տեխնիկական ձևափոխումներ կատարելու համար: Տեխնիկական ձևափոխումները կատարելուց հետո 21.10.2020թ. համապատասխան հաշիվ-ապրանքագրով 45 հատ խալաթները կրկին ուղարկվել են Ձեր կառույցին: Այնուհետև 27.10.2020թ. Ձեզ է ուղարկվել նաև մեր հաշվին կատարված խալաթների գործվածքի բաղադրության վերաբերյալ նյութագիտական փորձաքննության եզրակացությունը, համաձայն որի գործվածքի բաղադրությունը համապատասխանում է պայմանագրով նախատեսված

տեխնիկական բնութագրին, չնայած այդ պահանջը չի եղել ոչ պայմանագրով, ոչ մրցույթը հրավերի տեխնիկական բնութագրով:

Փաստացի 45 խալաթները 2020թ.հոկտեմբերի 21-ից գտնվում են «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի տնօրինության տակ, սակայն մինչև օրս դրանց դիմաց վճարումներ չեն կատարվել, խախտելով պայմանագրով նախատեսված վճարման ժամանակացույցը:

Համաձայն կնքված վերոհիշյալ պայմանագրի 5.2 կետի Գնորդը (տվյալ դեպքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն) Վաճառողից (տվյալ դեպքում «Անգել» ՍՊԸ-ից) հանձման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

բ) պայմանագրի 5.4 կետով սահմանված է, որ եթե Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին՝ 7 աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Փաստորեն 45 հատ խալաթի մասով Ձեր կառույցի կողմից խախտվել են կնքված պայմանագրի 5.2, 5.4 կետերը, ինչպես նաև 2.2.3 կետը (Գնման ժամանակացույցի համաձայն մատակարարված ապրանքների դիմաց վճարումներ չկատարելը), ուստի «Անգել» ՍՊԸ-ն միակողմանի լուծում է հիշյալ պայմանագիրը, հրաժարվում է մատակարարման ենթակա 80 լրակազմ «Կոստյում ձմեռային», 30 լրակազմ «Կոստյում» ապրանքատեսակների մատակարարումներից, չնայած որ նախատեսված հումքերը մեր կողմից ձեռք են բերվել, Ձեր կողմից մասամբ հաստատվել են և գտնվում են արտադրության պրոցեսում: Պահանջում մատակարարված 45 հատ «Խալաթ» ապրանքատեսակը ետ վերադարձնել «Անգել» ՍՊԸ-ին»:

Պատվիրատուն «Անգել» ՍՊԸ-ին ուղղված 17.12.2020թ. թիվ Ե/13/2444-20 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով ս.թ. ապրիլի 28-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 14, 26, 30, 32 և 34-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի «Անգել ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ 01/145 առ 09.06.2020թ. պայմանագիրը՝ 4 494 000 Հ դրամ ընդհանուր գնով: Պայմանագրով

մատակարարվող 14-րդ չափաբաժնող սահմանված 80 լրակազմ ձմեռային կոստյումները և 34-րդ չափաբաժնող սահմանված 30 լրակազմ կոստյումները, որոնց ընդհանուր գինը կազմում է 2 616 000 ՀՀ դրամ՝ «Անգել» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի՝

2.4.1 կետի Վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 կետի Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.4 կետի Վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով»:

Թիվ 1 Հավելվածի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 50 օրացուցային օրում:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 կետը, այն է՝ գնորդը իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 50 օրացուցային օրից ավելի:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն միակողմանի լուծում է «Անգել» ՍՊԸ-ի հետ 2020թ. հունիսի 09-ին կնքված թիվ 01/145 պայմանագիրը 14-րդ և 34-րդ չափաբաժինների մասով»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 18.12.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Ընկերությունը Պատվիրատուին ուղղված 22.12.2020թ. թիվ Ա-025 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Անգել» ՍՊԸ-ի միջև 09.06.2020թ. կնքված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով N 01/145 պայմանագրով նախատեսված 80 լրակազմ «Կոստյում ձմեռային» և 30 լրակազմ «Կոստյում» ապրանքատեսակները մեր կողմից Ձեր կառույցին

չմատակարարելու և այդ մասով պայմանագիրը մեր կողմից միակողմանի մասնակի լուծելու պատճառների վերաբերյալ մեր 08.12.2020թ. N Ա-020 գրությամբ հայտնել ենք Ձեզ:

Կրկնում ենք, որ հիշյալ պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն Ձեր կառույցին մատակարարել ենք 100 լրակազմ «Ամենօյա համազգեստ», 90 զույգ «Ուսադիրներ ամենօրյա» և 45 հատ «Խալաթ»: 100 լրակազմ «Ամենօյա համազգեստ» և 90 զույգ «Ուսադիրներ ամենօրյա» ապրանքատեսակների մատակարարման և վճարումների հետ կապված խնդիրներ չեն առաջացել, բացի վճարումների ուշացումները: Իսկ 45 հատ «Խալաթ» ապրանքատեսակը Ձեր կողմից վերադարձվելուց հետո 21.10.2020թ. դրանք կրկին ուղարկվել է Ձեզ, իսկ 27.10.2020թ. ուղարկվել է խալաթների գործվածքի բաղադրության վերաբերյալ նյութագիտական փորձաքննության եզրակացությունը: Նկատի ունենալով, որ խալաթների դիմաց վճարումները Ձեր կողմից անհիմն ձգձգվել են, մեր 08.12.2020թ. N Ա-020 գրությամբ հղում կատարելով վերոհիշյալ պայմանագրերի համապատասխան կետերին հիմավորել ենք վճարումների ուշացման հարցում Ձեր կառույցի մեղավորությունը, պահանջելով կամ կատարել խալաթների դիմաց վճարումները, կամ էլ ետ վերադարձնել 45 հատ խալաթները: Իսկ 80 լրակազմ «Կոստյում ձմեռային» և 30 լրակազմ «Կոստյում» ապրանքատեսակների մատակարարումից հրաժարվել ենք, չնայած որ նախատեսված հումքերը մեր կողմից ձեռք են բերվել, Ձեր կողմից մասամբ հաստատվել են և գտնվում են արտադրության պրոցեսում, այնուամենայնիվ այդ մասերով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծել ենք այն պատճառով, որ՝

տրամադրել եք անհասկանալի տեխնիկական բնութագրեր (մասնագիտական առումով հասկանալի չէ ինչ արտադրանք եք ցանկանում: Այդ պատճառով խնդրել ենք որոշ ապրանքատեսակների օրինակելի նմուշ տրամադրել, պատճառաբանել եք, թե նմուշ չունեք):

Տեխնիկական բնութագրով չնախատեսված լրացուցիչ պահանջներ եք ներկայացրել (մասնավորապես վերը հիշատակված նյութագիտական փորձաքննության կատարումը):

Մատակարարված ապրանքների դիմաց չեք վճարել:

Այնպես որ Ձեր 17.12.2020թ. N E/13/2440-20 գրությամբ հայտնածը, որ հիշյալ պայմանագրի 14-րդ և 34-րդ չափաբաժինների մասով պայմանագիրը միակողմանի լուծում եք և մեր նկատմամբ կկիրառեք պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը

և տուգանքները բացարձակապես անհիմն է և այն չի բխում պայմանագրի պահանջներից»:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>30 օրից ավելի</u>,***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ համաձայն գործում առկա նյութերի՝ «Անգել» ՍՊԸ-ն իր և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 09.06.2020թ. կնքված Պայմանագրով նախատեսված 14-րդ և 34-րդ չափաբաժինների մասով համապատասխանաբար 80 լրակազմ «Կոստյում ձմեռային» և 30 լրակազմ «Կոստյում» ապրանքատեսակների մատակարարման ժամկետը խախտել է 30 օրից ավելի, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Անգել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերում է Ընկերության այն դիտարկմանը, որ կարգի 45-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությունը չունի ոչ ամսաթիվ, ոչ ելքի համար, հետևապես այն պետք է դիտել առոչինչ փաստաթուղթ, քանի որ անհնարին է պարզել, թէ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն գործել է կարգի 45-րդ կետով նախատեսված 5-օրյա ժամկետի պահպանմամբ, թէ՝ ոչ, ապա սույն մասով գտնում եմ, որ Ընկերության նման դիտարկումն անհիմն է, քանի որ գործում առկա նյութերի

համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմին է ներկայացրել 23.12.2020թ. թիվ Ε/40/2510-20 գրությամբ:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Անգել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից, երբ Պայմանագիրը կնքած անձը համարվել է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված, այսինքն՝ 19.12.2020թ.-ից, իսկ Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, թիվ Ε/40/2510-20 գրությամբ ուղարկել է լիազորված մարմնին 23.12.2020թ., որպիսի պայմաններում արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից պահպանվել է Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.12.2020թ. թիվ 26/26-1/19653-2020 գրությամբ «Անգել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Անգել» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված

բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**